

ԴԵՎԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՄԵՌԱԿԱՆ ԿԱՊԸ.  
ՏԱՐՓՈԳԻՆԵՐ

Կնոջ և սատանայի սեռական կապը հիմնականում լինում է «անհետևանք»։ Երբեմն միայն ծնվում են տգեղ ու այլանդակ երեխաներ, որոնք, որպես կանոն, երկար կյանք չեն ունենում։ Իսկ տղամարդու և դիվուհու կապը հաճախ արդյունավետ է լինում։ Անգամ, ըստ հայկական որոշ ավանդապատումների, չարքերը լինում են միայն իգական սեռի. արուներ ընդհանրապես չեն ծնվում. հետևաբար, չար ոգիների «գուգավորումը» կատարվում է տղամարդկանց հետ, որոնցից ծնվում են նոր դիվուհիներ։ «Չարոց ըրխեն իսանից կ' ծնի,- ասվում է հայկական մի գրույցում<sup>939</sup>։ Իսանին (*մարդուն*) խաբում ան, սատանախաբ ան գցում, իսանից ըրխա ա ըլում, համա հըմէն էգ ան ընում-չարոց որձ չ'ինի» (*հմմտ. նան*՝ «*Հրեշտակնու էգ ու որձ չինի, համա (բայց) սատանեքը հըմէն (բողոքը) էգ ան*»,<sup>940</sup>)։ Այնուհանդերձ, չարքերի հետ սեռական կապի մեջ մտած մարդը՝ անկախ սեռից, դառնում է «դիվահար» (պրսկ. *dīv-zade*) և աստիճանաբար «չորանում է» ու մեռնում կամ էլ, ի վերջո, խելագարվում։ Ըստ սլավոնների, նման կապից ծնված երեխաները լինում են թուխ, հիմար ու չար և ընդհանրապես շատ կարճ կյանք են ունենում։ Երբեմն նրանք լինում են նաև աներևույթ։

Մարդու հետ սեռական փոխհարաբերությունների մեջ մտնող դևերը հաճախ ընդունում են ամուսնու կամ կնոջ (սիրեկանի կամ սիրուհու) կերպարը և գիշերը քնի մեջ այցելում նրան ու սեռական գրգիռ առաջացնում վերջինիս մեջ, որի արդյունքում տեղի է ունենում «սատանայախաբություն» կամ «գիշերախաբություն» (*պոլյուցիա*)։ Պարսիկները գիշերախաբությունը նույնպես կոչում են «սատանայախաբություն»՝ *šeytān bāzī kard*<sup>941</sup>։

Չարքերի հետ մարդկանց սեռական կապի հետաքրքիր դեպքեր են վկայված Կենտրոնական Ասիայի բնակչության շրջանում։ Հատկապես հարուստ է այս ասպարեզում տաջիկների հավատալիքային գանձարանը։ Գոյություն ունեն բազում պատումներ, որոնցից մի երկուսը բերենք այստեղ՝ ըստ ռուս ազգագրագետ Օ.Ա. Սուխարևայի գրառումների։ Մամարդանդի շրջանում գտնվող Քաֆթարխանա գյուղի մի բնակչուհի պատմում է, թե ինչպես նրա եղբոր դուստրը՝ տասներկուամյա Դոդարոյը, որն արդեն նշանված աղջիկ էր, դարձել էր տղամարդ փերու սիրային հետապնդումների առարկա։ Հոգին երևում էր միայն Դոդարոյին, ուրիշները նրան չէին տեսնում։ Նա արգելել էր աղջկան ամուսնանալ և միայն իրեն էր համարում նրա օրինական ամուսինը։ Աղջկա պատմելով, ոգին նրան երևում էր մեղրեսեի թալիբի կամ մուլլաբալչայի ուսանողի տեսքով։ Երկար մտորումներից հետո,- պատմում է կինը,- աղջկան տարանք գրբացի մոտ։ Վերջինս հայտարարեց, որ Դոդարոյին սիրահարված փերու անունը Մուլլա-խան է։ Մի խոսքով, երկար դժվարություններից հետո, Դոդարոյին հաջողվում է

<sup>939</sup> Նավասարդեանց Տ., *Հայ ժողովրդական հեքիաթներ*, Տփլիսի, 1889, էջ 29։

<sup>940</sup> Նույն տեղում, էջ 25։

<sup>941</sup> Асатрян Г., Геворгян Н., *Некоторые материалы по этикету у персов. – Этикет у народов Передней Азии*. Москва, 1988, с. 151.

ազատվել իր փերի ամուսնուց, որի հետ այդ ընթացքում նա արդեն նաև սեռական կապի մեջ էր գտնվում: Սակայն հեռանալով, Մուլլա-խանը նգովում է խեղճ աղջկան և հետագայում, երբ նրան վերստին ամուսնացնում են, նա գրկվում է իր ծնած երեխաներին կուրծք տալու հնարավորությունից, և նրանք մահանում են:

Մյուս դեպքը պատահել է մի տաջիկ կնոջ ամուսնու հետ: Նրա ամուսինը տասներեք տարեկանում դառնում է մի փերի կնոջ տարփալից սիրո զոհը: Փերին արգելում է նրան հարաբերվել օրինական կնոջ հետ, իսկ հետագայում, երբ հեռանում է՝ նրան դատապարտում է չբերության:

Տաջիկները գտնում են, որ մարդու և ոգիների կապից կարող են ծնվել երեխաներ, որոնք լինում են կամ չար, լկտի, հարբեցող ու անառակ կամ էլ ընդհանրապես աներևույթ են լինում: Համարում են, որ ծնվելուց հետո նրանց փերի հայրը կամ մայրն իրենց երեխաներին անմիջապես տանում են: Հաճախ էլ ֆիզիկական ինչ-որ առանձնահատկություն ունեցող մանուկներին՝ ծնված սովորական ծնողներից, տաջիկները նույնպես դատում են չարքերի զավակների թվին: Օրինակ՝ շիկահեր մարդկանց Սամարղանդի տաջիկները կոչում են փարի-գադ, այսինքն՝ փերուց ծնված, փերու զավակ:

Ղազախների մեջ վկայված է նաև մարդու և ալբաստիի (*տե՛ս ստորև*) ամուսնության դեպք<sup>942</sup>:

Հայկական ժողովրդական հեքիաթներում նույնպես փերուց ծնվածները սովորաբար չեն ապրում, եթե ապրում են էլ, ապա անպատճառ երբևէ իրենց մոր հետ հեռանում են. «Դրա հետ (փերու-Գ.Ա.) մի քանի տարի ապրեցինք՝ երկու տղա ունեցանք: ...Տղերքս որ մի չորս-հինգ տարեկան էլան, էդ կնիկս կպավ յախես թե. «Ախր, բա մեղք չենք, մինչև եփ մեզ փակես, չթողուս մի երեխանցս թաթը բռնած էս ալվան բաղչեքումը ման գամ»: Էդ կնիկն ա, երեխանցս թևիցը բռնեց գնաց, գնաց՝ շըրըփ ընկավ ծովը: Բա էս չսիպտակեմ, ո՞վ սիպտակի. համ էն թավուր հուրի-մալաք կնկանից գրկվեցի, համ էլ իմ անուշ բալեքից»<sup>943</sup>: Հայկական հեքիաթներում փերուց կարող է նաև ոչ միայն մարդ, այլև կենդանիներ ծնվել, որոնք ի վերջո մահվան են դատապարտված. «Քանի օր անցավ, ասոր հետ (փերու-Գ.Ա.) պսակվա... Թախ մորս քովը գալը, կնիկս բերել էր իրեք տղա: Ադոնցմեն մեկը շան լակոտ էր, օրթանճան՝ խոզի ձագրմ, անմեկեն պզտիկը, որ աղջիկ էր, կատվի ձագ էր: ...Ադ օրն անցավ՝ սապախդան կանուխ ելլեմ օր մեծ մանչս մեռեր է... Մեկալ գիշերն անցավ՝ աշեմ օր օրթանճա մանչս մեռեր է... Մեկալ օրն ա՝ ախչիկս մեռավ»<sup>944</sup>: Ըստ Տուրուբերան նահանգում գրանցված մի հեքիաթի, որը թերևս ամբողջացնում է հայ ժողովրդի փերիների հետ մարդու ամուսնության, սեռական կապի վերաբերմունքը, «Փերին մարդու քյուլֆաթ չէլնի»<sup>945</sup>:

Ի դեպ, միշտ չէ, որ մարդուն սիրային փորձության են ենթարկում միայն չար ոգիները: Հաճախ բարի, աստվածային էակները նույնպես մահկանացուների հետ կարող են ամուսնական կապի մեջ մտնել: Նման պյուժենների հարուստ համակարգ է

<sup>942</sup> Մանրամասն տես, Сухарева О., *Пережитки демонологии и шаманства у равнинных таджиков.* – Домусульманские верования и обряды в Средней Азии, Москва, 1975, сс. 13, 47-57.

<sup>943</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. II, Երևան, 1959, էջ 362:

<sup>944</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. IV, Երևան, 1963, էջ 411-414:

<sup>945</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. XIII, Երևան, 1977, էջ 217:

ներկայացված առաջավորասիական և հունահռոմեական առասպելաբանության մեջ: Հատկապես երկվորյակների ծնունդը հնուց ի վեր դիտվել է որպես աստվածային գոյի մասնակցության աներկբայելի փաստ: Երկվորյակների պաշտամունքը, որը ժամանակին մեծ տարածում է ունեցել ինչպես Առաջավոր Ասիայում, այնպես էլ Եվրոպայում, իր արմատներով հասնում է հենց այս մտայնությանը: Հին հռոմեական Ռեմուսը և Ռոմուլուսը և իրանական Զրվան աստծուց ծնված Օրհնուզդը և Ահրիմանը դրա օրինակներն են: Միջին Ասիայի ժողովուրդները Հասանին ու Հուսեյնին՝ Մուհամմեդ մարգարեի թոռներին, համարում են երկվորյակներ և արու գույգերին հաճախ կոչում են նրանց անունով: Մուսուլմանական ավանդության մեջ համապատասխան կանացի գույգի բացակայության պատճառով Մարգարեի դստեր, Հասանի և Հուսեյնի մոր՝ Ֆաթիմայի գուհրա ,փայլունե մակդիրը (*Ֆաթիմա գուհրա-փայլուն, շողշողուն Ֆաթիմա*) անձնավորվել է և հանդես է գալիս որպես Ֆաթիմայի երկվորյակ քույր: Նրանց կոչում են Բիբի Ֆաթիմա և Բիբի Զուհրա: Այդ անուններով են մինչև օրս կոչում երկվորյակ քույրերին:

Կնոջն այցելող դները գիտական գրականության մեջ կոչվում են *incub(us)*, իսկ տղամարդուն՝ *succuba*: Հայոց մեջ տարփանքի գիշերային ոգիները տարբեր անուններ ունեն: Կենտրոնական Իրանի հայության մեջ (*Բախահանի նահանգի Փերիայի գավառում, օրինակ*) վկայված է **խատատիճ, խատատիչ** անվանումը (*գրի է առնվել հեղինակի կողմից*). Հայաստանի որոշ վայրերում օգտագործում են սատանա, դև բառերը: Գիշերային խաբող չարքերի դերում երբեմն հանդես են գալիս պերը կամ ալքերը (տե՛ս ստորև): Տարփանքի ոգիները, չբավարարվելով դիվական կրքերին հագուրդ տալուց, փորձում են նաև ինչ-որ կերպ վնասել իրենց ,սիրեցյալներին՝ շնչարգելություն առաջացնելով, և այլն: Այդպես են վարվում, օրինակ, **խատատիճները, խպիլիկները** կամ **խիպիլիկները**<sup>946</sup>, նաև **խառա-խուռաները** (թուրք.՝ *ղարա-դուրա, գարա-գուրա «մղձավանջ»*): Խպիլիկների մասին Ղ. Ալիշանը գրել է. «Ծանոթ է այս անունս ի խոսս, պես պես մտոք, և սովորաբար կիմացվի փոանգաց *cauchemar* (*ռուս.՝ кошмар.- Գ.Ա.*) ըսածին, որ ավելի հիվանդությանց կարգի պետք է դրվիլ, զի կարճատև նեղության կամ ճչում մ'է կըրծոց՝ քնո ատեն... Բժշկարանի մեր ուրիշ հիվանդությանց հավասար հիշեն և գրեն պարզապես՝ ինչպես անոնց մեկը գրե. «Քեապուս, որ է խպիլիկն, որ գիշերն ի քնուն մեջն լինի մարդո», և... խպիլիկին դեղերն այլ գրելեն ետև, կավելցնե. «Եվ Աստված պահե քեզ ի խպիլիկ ցավուն, եղբայր. ամեն»<sup>947</sup>: «Խիպիլիկ ասելով հներն հասկանում էին գաբուսը կամ մղձավանջը,- նշում է Բենսեն (*Ս. Մովսիսյանը*),- որ քնի մեջ մարդկանց կրծքերը ճնշում և շնչահեղձություն էր պատճառում: Բուլանըխում (*Հարքում*) խիպիլիկն հայտնի էր նշանավոր քուրզով (թաղիքե գդակ), որը ծածկելով, անտեսանելի էր դառնում... Խիպիլիկի հետ հիշվում է իպիլիկը, որ հայտնի չէ բառախա՞ղ է, թե՞ առանձին ոգի. օրինակ, հեզնանքով ասում էին՝ Ինչ իպիլիկ, ինչ խիպիլիկ, Ինչ նախրճին, ինչ իր կին»<sup>948</sup>:

<sup>946</sup> հմմտ.՝ Աբեղյան Ս., *Հայ ժողովրդական հավատքը*, Երկեր, հտ. 5, Երևան, 1975, էջ 35:

<sup>947</sup> Ալիշան Ղ., Հին հաւատք հեթանոսական կրօնք հայոց, Վենտիկ, 1895, էջ 228-229:

<sup>948</sup> Բենսեն (Մովսիսյան), *Հարք (Սշո Բուլանըխ)*, Տոներ և ծեսեր. ՀԱԲ, ն. 3, Երևան, 1972, էջ 61, հմմտ. նաև՝ «Խիպիլիկի քուրզ» հեքիաթը.- *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հտ. X, Երևան, 1967, էջ 22-25:

Իպիլիկ ձևը, իհարկե, ավելի շուտ բառախաղի արդյունք է և ոչ առանձին ոգու անվանում: Իպիլիկ անունը, ինչպես խատատիճ/չ-ը, ծագումով հնչափաաստային կազմությունն է: Առաջինն անցել է նաև թուրքերենին<sup>949</sup>: Իպիլիկի մասին Ակնում արձանագրված է հետևյալ ասացվածքը. «Սատանին դիմաց խըպըլի՞կ կու խաղցնե», այսինքն՝ խըպըլիկն ի՞նչ կարող է անել սատանայի դիմաց. ասվում է, երբ որևէ մեկը ձգտում է մյուսին խաբել, իսկ վերջինս իրեն համարում է առավել խորամանկ:

Ջ. Ռասելը ինչ-որ աղբյուրից հիշում է նաև Իրանի քրդերի շրջանում տարածում ունեցող գիշերային մի ոգու, որը կոչվում է *xilbilik*, և համարում է այն փոխառություն հայկական խիպիլիկ-ից, իսկ վերջինս, ըստ նրա, ծագում է խաբել բայից<sup>950</sup>: Հիշյալ քրդական ձևը, սակայն, եթե այն, իհարկե, *ghost-word* չէ (*ձայնավորների որակն, օրինակ, պարզ չէ՝ խիլիլիկ պետք է այն կարողալ, թե՞ խըբըլիկ*), ավելի շուտ մոտ է հայկական խլվլիկ-ին, քան խ(ի)պիլիկ-ին: Իսկ ինչ վերաբերում է խ(ի)պիլիկ-ի առաջացման առաջարկված վարկածին, ապա այն, ըստ էության, քիչ հավանական է:

Որոշ հայ հեղինակներ, մասնավորապես նույն Բենսեն (*անդ*), խիլիլիկին գուգահեռ, հիշում է նաև **քարուսին** (*կամ գարուսին*)՝ որպես նմանօրինակ գործառույթ ունեցող ոգի: Քարուսը կոշմար կամ մղձավանջն է,- գրում է նա,- որն ունի մի երկար թեսպիհ (*համրիչ*), մարդկանց վրա հարձակվելուց առաջ իր թեսպիհն անց է կացնում կծի բերանը, ապա նոր խեղդում մարդուն: Ասում էին, այդ ժամանակ եթե կարողանան համրիչը վերցնել կծի վրայից, գարուսին կարելի կլինի բռնել (*անդ*): Քարուսը (*գարուսը*), սակայն, ակնհայտորեն մեր խիլիլիկի պարսկական տարբերակն է և, իրականում, որպես առանձին ոգի մեզանում հանդես չի գալիս: Բենսեի նկարագրածը պարսկական (*կամ քրդական*) պատկերացման արտացոլումն է:

Ըստ երևույթին, տարփոգիներ են **շվոտները** (*շվոդները*) նույնպես (*տե՛ս ստորև*): Տարփանքի կամ խեղդող ոգի է նաև **գողոսը**, «որ գիշերները մարդու վրա կչոքի և շունչը կբռնե»<sup>951</sup>: Այս դևի անունը դժվար բացատրելի է. կարող է կոտոշ բառի բարբառային տարբերակ լինել, մանավանդ, որ Դերսիմի հայոց բարբառում հին հայերենի շ-ի անցումը ս-ին օրինաչափ երևույթ է (հմմտ.՝ *շուն* > *սուն*, և *այլն*):

Մի հետաքրքիր հեքիաթում օձակերպ «քաջանց թագավորի տղեն» (այսինքն՝ *քաջքերի արքայազնը*) սիրահարվում է մեծ ընտանիք ունեցող մի կնոջ և սեռական կապի մեջ մտնում նրա հետ: Ըստ որում, նա միշտ համարձակ մտնում է իր սիրուհու տուն կատվի կերպարանք առած. «Էդ կատուն էդ կնկա աչքին տսվերկու տարեկան խորդմ ա»<sup>952</sup>:

Դևի և կնոջ սեռական կապը և ամուսնությունը հայկական ժողովրդական հեքիաթներում ամենից տարածված սյուժեն է: Դևից ու մարդուց ծնվածները սովորաբար, շատ ուժեղ են լինում, որովհետև «...ինչ ուզում ա ըլի, դևի ցեղից են», և մեծանում են առասպելական հերոսների նման. «Ով տարով ա մեծանում, տա օրով ա մրձանում»<sup>953</sup>: Ի դեպ, միշտ չէ, որ կանայք հարկադրաբար են սեռական կապի մեջ մտնում, կամ

<sup>949</sup> Dankoff R., *Armenian loanwords in Turkish*, Wiesbaden, 1995, p. 62, N 247.

<sup>950</sup> Russell J., *Zoroastrianism in Armenia*, Harvard, 1987, p. 456.

<sup>951</sup> Երեւանեան Գ., *Պատմութիւն Ջարսանճագի հայոց*, Պեյրութ, 1956, էջ 528:

<sup>952</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. XI, Երևան, 1980, էջ 465:

<sup>953</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. VI, Երևան, 1973, էջ. 405-414:

ամուսնանում դների հետ, ինչպես ասենք այս հեքիաթում. «Էս Դևի սերն ընկնում ա էս հարսի վրա... Էս Դևը էկավ ռավոտը, տեհավ մարդը գնացել ա ֆորսի, էկավ էն հարսին բարով էլետ... Մինչև կեսօր խնորվեց, եղնա սկսեց վախացնել, խյուլասա՝ կամքը կատարեց... Էդ կնկա սերը ընկավ էդ Դևի վրա, իրա մարդուց ավելի ա սիրում...»<sup>954</sup>: Կանայք շատ հաճախ թողնում են իրենց ամուսիններին ու գնում դևի ետևից, ավելին՝ առողջացնում են վիրավոր դևին, կենդանացնում՝ սպանվածին: Դևից ու կնոջից ծնված երեխաները, որպես օրենք՝ արական սեռի, մեծանալով՝ դառնում են իրենց խորթ հոր (մարդու-Գ. Ա.) կամ քեռու օգնականները, հավատարիմ ընկերներն ու իսկական եղբայրները և սպանում են իրենց դև հորը և մորը: Ահավասիկ՝ Ղարաբաղում գրանցված մի հեքիաթի համաձայն, Յոթ գլխանի դևից և մարդուց ծնված տղան հավաքում է դև հոր և իր մարդ-մոր ձեռքերով սպանված իր մեծ եղբոր մարմնի կտորները, դնում է ձիու վրա («Ա՛՛ ծի, իմ ախպորը սաղ վախտին շատ ես ման ածիլմ մի քիչ տըհենց ման ածա...»), և ի վերջո անմահական ջրով կենդանացնելով նրան, գնում է եղբոր վրեժն առնելու. «Սա կյալի ա ըտի, դևին էլ, մորն էլ սպանըմ ա, կտոր-կտոր անըմ»<sup>955</sup>: Դևերի հետ ամուսնացած կանայք հինականում իրենք են լինում իրենց ամուսնու, հարազատ որդու, եղբոր սպանության նախաձեռնողները...

Գիշերային տարփանքի դևերը, որոնք, միևնույն ժամանակ, երբեմն նաև խեղդող և վնասող ոզնիներ են, պարսիկների շրջանում կոչվում են քաբուս, որը նաև «մղձավանջ» իմաստն ունի: Այս ոզու գոյությանը հավատում են նաև քրդերը և Հայաստանի եզդիները<sup>956</sup>: Քաբուս բառն արաբական փոխառություն է և իր հերթին հանգում է լատիներեն *incubus* ձևին (*տես վերևում*): Այս ոզու համար Իրանում օգտագործում են նաև **բախտաք** (*baxtak*) տերմինը:

Ռավարի շրջանում (*Իրանի Քերման նահանգում*) արձանագրված է նմանօրինակ մի ոզի, որը կոչվում է **խոֆթու** (*xoftū*): Եթե մարդ ժամանակին արթնանա և բռնի նրա քթից, ապա ինչ ցանկանա, վերջինս նրա համար կանի<sup>957</sup>: Բախտիարների գիշերախեղդ դևը կոչվում է **թափթափո** (*taptapo*), որը կավե քթով ոզի է, և նրանից փրկվելու համար պետք է քթից բռնել: Խեղդող ոզի (նաև տարփոզի) է **ալիխունգին** (*alixūngī*), որի լեզվից եթե մեկը բռնի, կարող է իմանալ նրա գանձերի տեղը: Խորասանցիք հավատում են, որ ալիխունգիի գանձերը պարտակված են ծիածանի հիմքի մոտ: Պարսիկներն ունեն ևս մի տարփոզի, որը կոչվում է **խանդալա** (*xandala*):

Պարսից դասական բնագրերում հանդիպում է նաև մի շարք այլ գիշերային տարփոզիների անվանումներ, օրինակ՝ **խաֆջ** կամ **խաֆջա** (*xaf(ā)*), **ֆադրանջաք** (*fadranak*), **խուֆթաք** (*xuftak*), **խաֆրանջ** (*xafran*), **խաֆթու** (*xaftū*) և այլն: Բացի վերջին ձևից, որն օգտագործվում է ներկայիս բարբառներում (*հմմտ.՝ վերևում նշված խաֆթու-ն*), մյուսները ժամանակակից լեզվում այլևս գործածություն չունեն: Ծագման իմաստով բոլորն էլ ընդհանուր առմամբ բացատրելի են. *xuftak*-ը և *xoftū*-ն, անկասկած, կապվում են *xuftan* «քնել» բայի հետ, իսկ *xof(ā)*-ն ունի Ավեստայում վկայված իր նախաձևը՝ *xawza-*, որը նշանակել է «արվամուլ, pedicator»:

<sup>954</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. XIII, Երևան, 1985, էջ 222:

<sup>955</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. VI, Երևան, 1973, էջ. 446-458:

<sup>956</sup> հմմտ.՝ Ավդալ Ա., Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957, էջ 93:

<sup>957</sup> Karbast-Ravari, *‘A. Karbāsi-Rāvari. Farhang-e mardom-e Rāvar*. Tehran, 1365 (1987), p. 149.

## БРАК МЕЖДУ ЧЕЛОВЕКОМ И НЕЧИСТОЙ СИЛОЙ: СУККУБЫ

*Геворг Асатрян*

(Резюме)

В статье рассматриваются все отмеченные в армянской народной традиции случаи матримониальных отношений между человеком и персонажами низшей мифологии. Работа основана на материале фольклорных текстов и изданной литературы по релевантным вопросам. Приводится полная номенклатура ночных соблазнительниц (*суккуб*), засвидетельствованных как в армянских, так и в современных иранских поверьях.